

բուն մէկ կամարաձիգը կը ներկայացը-
նէ , հանդերձ երկրորդի մը սկզբնաւու-
րութեամբ : Պատկերը կը ցուցընէ թէ
կամրջին բարձրութիւնը այնչափ է՝ որ
մեծամեծ նաւեր ալ կրնան տակէն
անցնիլ :

3ր . Պատկերը կը ցուցընէ թէ կա-
մուրջը որչափ բարձրութիւն ունի ցա-
մաքի յենարանին կողմէն : Զրին մէջ
տեսնուած Բ կէաերը վեր կը բռնեն մա-
լուխը , որ կամարասեանց ուղղութիւ-
նը կը ցուցընէ , ու զանոնք մէկմէկու-
հետ կը կապէ : Կամրջին երկու եղեր-
քէն պսակներ կան , որոնց վնջուած
տեղերէն շոգեկառաց կառատորմիլ մը
կը տեսնուի : Յամաքին յենարանին մօտ
կամրջին թանձրութիւնն է 60 մեղր , և
ծովուն հարթաչափէն 52 մեղր բար-
ձըր է :

4ր . Պատկերը կամրջին և մէկ յենա-
րանին յատակը կը ցուցընէ : Մէջտեղը

շոգեկառաց ճտմբուն չորս գիծ ձողերը
կան (0) , երկու եղերք կամ պսակ (P)
որ հասարակ կառաց ու շոգեկառաց
ճամբաները մէկմէկէ կը զատեն , և հե-
տի գնացող մարդոց համար (QR) եղեր-
քի երկու ճամբաները :

5ր . Պատկերը ցամաքի յենարանին
միջին բարձրութիւնը կը ցուցընէ :

6ր . Պատկերը կամրջին հատուածն
է . SSS ձողերն են որ կամրջին ճամ-
բան վեր կը վերցընեն : Ծանրութիւնը
կամրջին ամեն կէտին վրայ հաւասա-
րապէս բաժնած է . և ընդհանուր չէն-
քը զարմանալի է ամրութեան ու թե-
թեութեան կողմանէ :

7ր . Պատկերը կամարասիւն մը կը
ներկայացընէ , զոր նաւաքարշ շոգենաւ-
մը հաստատուելու տեղը կը քաշէ կը
տանի :

8ր . Պատկերը կամարասեան մը հա-
տուածը կը ներկայացընէ :

ԶՕՐՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Ինչու դուք կայտառ ու զըւարթ տըղայք՝
Ալեւոր գլխուս վըրայ զարմանայք .
Այդ ձեր խոպոպիքն ալ՝ հոգերու տակ
Այսպէս պիտ' ըլլան գունաթափ ճերմակ :
Ես ալ նըման ձեզ ունեցեր եմ մայր ,
Որ գուրզուրալով ճակատէս ի վայր՝
Այտիցս աղուամազ ցողիկն համբուրէր ,
Պապաջուն լեզուս իր պարտքին կըրթէր :
Ինքն՝ երբ գիշերուան փոռուէր անկողին՝
կու ճըկեցընէր ծընկիկս ի գետին ,
Եւ ձեռքը զլխուս վըրայ դընելով
կ'աղօթէր ինծի համար՝ ծունկ գալով :
Բայց սակայն հասաւ օր մ'ալ ահաւոր .
Մինչ ես վազէի յանկողին իմ մօր՝
Անգութ ձեռուըներ զիս մէկ զի հրեցին ,
Եւ մօրըս համար՝ մեռաւ գնաց ըսին :
Գացի վրցուցի ճերմակ վարդ մ'աղուոր ,
Եկայ կամացուկ դըրի քովս անոր .
Կարծէի թէ քուն կըլլայ կարգէ դուրս .
Զի ձայնն անոյշ չէր գար ականջներուս :

Այն զիշեր տրտմած ծունկս ի վար դըրի .
Եւ միս միայնակ աղօթքներս ըրի .
Բայց դեռ աչքերս այնպէս պայծառ էին .
Որպէս թէ իր ձեռքը վրաս ըլլային :
Անցան տարիներ , անոնց հետ անցան
Խընդութիւն , զրօսանք և խաղք մանկական .
Խեռ ու շրջմոլիկ պատանեակ մ՞եղայ ,
Ամօթէ վախէ անփոյթ անրդգայ :
Եղեղի պէս զիս կըրքեր շարժեցին .
Բայց յառաջ քան քուն մտնելս յանկողին .
Սիրտըս կը խայթէր այն ձեռքըն փափուկ .
Եւ գետին ընկած կու լայի տաքուկ :
Իսկ երիտասարդ հասակն երբ հասաւ .
Առաքինութեան նեցուկս ալ ընկաւ .
Բայց իրիկուան դէմ ցուրտ ձեռք մ՞ինձ դպչէր ...
Ա՛հ , երանեալ մայր , միթէ քուկըդ չէր :
Պըտրտեցայ շատ երկիրներ օտար .
Վեր վեր զարնէին երակըս անդադար .
Մոլութիւնք չորս զիս սփուէին թակարդ ,
Հեշտութիւնն՝ աչացս էր գերող կախարդ :
Բայց դեռ ունէր այն ցուրտ ձեռքն ու փափուկ
Իր խորհրդաւոր ազգմունքըն յատուկ ,
Ինչպէս երբ ի մէջ խարտեաշ մազերուս
Թեթեւիկ ուժով մը շարժէր ներս դուրս :
Անոր հետ լըսուէր ձայնիկ մ'ալ հոգած ,
Այն խորհրդաւոր կարծես՝ դուրս ելած .
« Որդեակ , ով իմ մէկ հատիկս , ըզգոյշ լեր ,
Եւ քու Աստուծոյդ դէմ մի մեղանչեր » :
Կարծէր զուք թերեւս թէ տարկիրն առին
Իմ տաք տաք զգացմունքըս բոլոր տարին .
Եւ հոգւյս պնակիարն պլտորեցամւ . —
Ոչ . այլ նաեւ երբ փետրոտ սազուարտաւ
Ճօճայի ճակատս՝ ազատ տիրաբար ,
Առաջնորդելով զօրաց զինավար .
Կամ երբ գեղեցկին մատներըն թըրթուն
Խաղային մէջ իմ կտրիճ մազերուն ,
Այն սուրբ դըպչիլն՝ ես ոչ երբեք մոռցայ .
Եւ մինչ ծերութիւնըն նոյն իսկ հիմայ
Իմ բաղդըս կընքեր է իր ցուրտ կընքով ,
Դեռ կըզգամ դպչիլ ճակտիս այն ձեռքով :
Եւ թէ օր մը զիս յերկինըս տեսնաք ,
Մօր մը սուրբ աղօթք , արցունք անուշակ ,
Մօր ձեռք՝ որք առ հեղ Փրկիչըն դիմեն ,
Զիս մոլորեալս հոն տանողն՝ ասոնք են :

ՍիկոՒՐՆէՅ (Sigourney)
Տիկին Ամերիկացի :